ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **30.11.2022թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ա. Հարությունյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (նիստը վարող)
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Ս. Սահակյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող
Ս. Սարգսյան	- Տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող
Ա. Առուշանյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Գ. Հովհաննիսյան	- Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Չեն մասնակցել՝

Ն. Մկրտչյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Օրակարգի հարցեր.

1. Տեսչական մարմնի 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

2. Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

3. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2022թ. 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության հաշվետվությունների քննարկում, Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության կատարողանի գնահատման հաստատում:

4. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

5. Այլ հարցեր:

Ա. Դանիելյանը տեղեկացրեց, որ համաձայն Խորհրդի աշխատակարգի՝ Խորհրդի նախագահի որոշմամբ նիստը վարելու լիազորությունը վերապահվել է իրեն և ներկայացրեց նիստին հրավիրված անձանց:

Ա. Հարությունյանը նշեց, որ տեսչական մարմինների կառավարման խորհուրդների նիստերին ներկա գտնվելը ավանդույթ դարձնելու նպատակ է հետապնդում և ցանկանում է սերտորեն համագործակցել տեսչական մարմինների հետ, քանի որ տեսչական մարմինները ունեն լուրջ կազմակերպչական, մեթոդանության հետ կապված, օրենսդրական խնդիրներ, որոնք տարիներով չեն լուծվում և հաճախ տեսուչների կողմից կատարված աշխատանքը ի զուր է: Հաշվի առնելով, որ դատարանները անկախ են գործում բողոքարկվող գործերի վճիռները կայացվում են ոչ հոգուտ տեսչական մարմինների, որի հետևանքով տեսչական մարմինների նկատմամբ անվստահություն է առաջանում: Խնդիրները տարբեր բնույթի են և այս դեպքում թերանում են տեսչական մարմինները, որոշ դեպքերում տեսչական մարմինների կառավարման խորհուրդները, տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը և ՀՀ վարչապետի աշխատակազմը, որից ելնելով ակնկալվում է, բոլորով համագործակցաբար, խնդիրների վերհանումը և դրանց արագ լուծումը, որպեսզի վերականգնվի տեսչական մարինների նկատմամբ վստահությունը, այնուհետև արդյունավետ դարձնել այն բարեփոխումները որոնք իրականացվելու են, քանի որ տեսչական մարմինները այդ բարեփոխումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ են:

Ա. Ավանեսյանը կարևորեց տեսչական մարմինների կառավարման խորհրդներում նախաձեռնված բարեփոխումները: Նշեց, որ իրականացվող բարեփոխումների օրակարգը չի կարող ընթանալ, եթե դրանց նկատմամբ բավարար

չափով վերահսկողություն չի իրականացվում: Երբ օրենքները ընդունվում են տնտեսավարողները սկզբում դրանցով սահմանված պահանջներին հետևում են, սակայն երբ որոշները սկսում են խախտումներով իրենց գործունեությունը իրականացնել և այդ խախտումները կանխելու ուղղությամբ արագ արձանք չի կատարվում, ստացվում է, որ մյուսները դրսևորում են նմանատիպ վարքագիծ: Կարևորելով տեսչական մարմինների կառավարման խորհուրդների աշխատանքները, պետք է միասնական ուժերով հասնել բարեփոխումներով պայմանավորված վերահսկողության պատշաճ առկայությունը: Նշեց, որ ծխախոտի հետ կապված բարեփոխումների շրջանակներում վերահսկողության պակասը ակնհայտ է, որով պայմանավորված պետք է փոփոխություններ իրականացնել այդ առումով, բայց կան նաև այլ ոլորտներ, օրինակ՝ թվայնացման մասով, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին բերելով թվայնացման դաշտ, սակայն վերահսկողության բացակայությունը նույնպես խոչընդոտում է բարեփոխման իրականացմանը:

Ա. Դանիելյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Ս. Սարգսյանը առաջարկեց օրակարգում լրացնել ևս մեկ հարց, կապված ԱԱՏՄ-ի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի գործունեության դադարեցմամբ: Նշեց, որ վերջին օրենսդրական փոփոխությունների համաձայն 2022 թվականի դեկտեմբերի 1-ից սահմանային հսկիչ կետերում վերահսկողության գործառույթները վերապահվել են մաքսային մարմիններին և սահմանապահ զորքերին, ինչից ելնելով մշտական վերահսկողություն ԱՏԱՄ-ն այլևս չի իրականացնելու, բացառություն են կազմում ՀՀ կառավարության սահմանած դեպքերը: Դրանով պայմանավորված առաջարկեց ԱԱՏՄ-ի հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություններ՝ բաշխելով ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի հաստիքները ԱԱՏՄ տարածքային կենտրոնների միջև, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

Վ. Հովհաննիսյանը առաջարկեց հաստիքները կրճատել և հետագայում անհրաժեշտության դեպքում քննարկել հաստիքների համալրման հարցը:

Ա. Հարությունյանը նշեց, որ այս պահին հնարավոր չէ հաստիքները կրճատել, սակայն առաջարկեց այս տարի քննարկել այդ հարցը:

Ա. Դանիելյանը նշեց, որ փոփոխությունները կրելու են տեխնիկական բնույթ, միայն կատարվելու է առկա հաստիքների բաշխվածություն և բովանդակային առումով որևէ փոփոխություն չի իրակականացվելու:

Որոշվեց օրակարգը լրացնել հարցով՝ «Հավանություն տալ ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն և ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած ճանաչելուն»:

Օրակարգից հանվեց 3-րդ հարցը և հաստատվեց մեկ լրացուցիչ հարց:

Ա. Դանիելյանը առաջարկեց լրացված հարցով քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն (8 կողմ) քվեարկությամբ որոշվեց հավանություն տալ ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն և ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած չանաչելուն:

1. Քննարկվեց օրակարգի հարցերը՝

- Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում,

- Տեսչական մարմնի 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում

Ս. Սարգսյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից կատարված և նախատեսվող աշխատանքները: Նշեց, որ 2022 թվականին նախատեսված ստուգումներից իրականացվել է 625 ստուգում, ինչպես նաև այդ ստուգումներով պայմանավորված 130 վերստուգում: 2021 թվականին իրականացված ստուգումներով պայմանավորված 2022 թվականին իրականացվել է 68 վերստուգում, նաև 2020 թվականից իրականացված ստուգումներով պայմանավորված 19 վերստուգում: 2022 թվականին իրականացվել է 1636 վարչական վարույթ, որից նախաձեռնությամբ 1226, իսկ դիմումի հիման վրա՝ 410: Խախտումները վերացնելու ուղղությամբ տրվել են 348 կարգադրագիր, իսկ 1230 վարույթը կարճվել է: Նշեց, որ ստուգումների արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը: Ներկայացրեք 2023 թվականին նախատեսվող միջոցառումները, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումները:

Միաժամանակ նշեց, որ ծխախոտի իրացման արգելքների հետ կապված նախատեսվում է ուժեղացված վերահսկողության իրականացում:

Ներկայացրեց նաև 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը: Նշեց, որ նախատեսվում է իրականացնել 800 ստուգում ըստ ոլորտների, սակայն ներկայացվել է 712 տնտեսավարող, հաշվի առնելով, որ որոշ տնտեսավարողները իրենց գործունեությունը իրականացնում են մեկից ավելի ոլորտներում: Այդ տնտեսավարողներից 656-ը բարձ ռիսկային են, 104-ը՝ միջին, 40-ը՝ ցածր:

Ա. Հարությունյանը նշեց, որ ակնհայտ է բազաներում առկա խնդիրները: Եթե պատշաճ աշխատանքներ իրականացված լիներ նախորդ տարիներին և առկա բազաները համադրվեին, ապա ցանկերը կկրճատվեին: Միաժամանակ ծխախոտի ուժեղացված վերահսկողություն նախատեսելու հետ կապված հարցրեց, թե ինչն էր խոչընդոտում ընթացիկ տարում այդ հսկողության իրականացմանը, որը չի իրականացվել, ինչպես նաև դատական գործերի արդյունքում ոչ հոգուտ ԱԱՏՄ-ի կայացված վճիռների պատճառների մասին:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ ծխախոտի հետ կապված վերահսկողությունը չի իրականացվել համապատասխան հիմքի բացակայության

պատճառով: Դատական գործերի վերաբերյալ նշեց, որ առկա են ակնհայտ վարչարարության ընթացակարգերի խախտումներով տուգանքներ, վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները չծանուցելու, այն առանց իրավախախտի ներկայության կազմելու դեպքեր, ինչպես նաև՝ այն գործերով, որով ակնհայտ լսված լինելու իրավունքի խախտումներ են վերահանվում այդ գործերին ընթացք չի տրվում, այսինքն՝ վերադաս դատական ատյաններ չեն բողոքարկվում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ ԱԱՏՄ-ի դեմ ներկայացված հայցերը դատարանի կողմից բավարարելու պատճառը հիմնականում հանդիսանում են անձի լսված լինելու իրավունքը չապահովելու հանգամանքով պայմանավորված: Վարչական իրավախախումների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց իրավախախտը պետք է պարտադիր հրավիրվի համապատասխան մարմին, որպիսզի իր ներկայությամբ կազմվի այն, սակայն հաճախ առաջանում են ծանուցումների հետ կապված հարցեր, մասնավորապես ծանուցումը տվյալ տնտեսավարող սուբյեկտին հանձնելու հետ կապված խնդիրներ են առաջանում: Այս տարի տեսչական մարմինների աշխատանքները համակարգող գրասենյակի կողմից օրենսդրական փոփոխություններ նախաձեռվեց, որի արդյունքում առաջացած խնդիրը լուծվեց: Դրանով պայմանավորված հնարավորություն ունենք ծանուցումները հրապարակել հրապարակային ծանուցումների. պաշտոնական ինտերնետային կայքում: Որոշ դեպքերում հայցերը բավարարելու պատճառը նաև տեսուչի անփութության հետևանքն է:

Ա. Հարությունյանը հարցրեց, թե արդյոք այդ խնդիրների հետևանքով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, թե ոչ:

Գ. Հովաննիսյանը պատասխանեց, որ իրականացվել են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում կիրառվել են կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ նկատողություններ և խիստ նկատողություններ:

Տ. Քեյանը հարցրեց, թե ինչ բնույթի խախտումներ են արձանագրվում, որի արդյունքում իրավախախտի ներկայությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն չի կազմվում, հաշվի առնելով, որ անձի լսված լինելու իրավունքի հետ կապված հարց է առաջանում:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ հաճախ ստուգման ժամանակ ձեռք են բերվում փաստաթղթեր կամ նյութեր, ինչի արդյունքում տեղում հնարավոր չէ արձանագրել խախտումը՝ առանց հետագա փորձաքննության իրականացման կամ ուսումնասիրության: Ստուգման արդյունքում պետք է կազմվի նաև ստուգման ակտի նախագիծ, որից հետո ստուգման ակտ, որի արդյունքում տրվելու է կարգադրագիր, ինչի պարագայում հնարավոր չէ մեկ խախտման համար կազմել արձանագրություն և հաջորդիվ մյուս այլ խախտումների համար կազմել այլ արձանագրություն: Տվյալ դեպքում հաշվի է առնվում ստուգման ակտի նախագծի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից առարկություններ ներկայացնելու իրավունքի առկայության հանգամանքը, ինչի հետևանքով արձանագրված փաստերը կարող են հանվել ստուգման ակտից և որպես խախտում չորակվել: Միաժամանակ նշեց, որ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում իրականացված ստուգման ժամանակ

վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները կազմվում են տեղում՝ իրավախախտի ներկայությամբ:

Ա. Առուշանյանը նշեց, որ վերադաս դատական ատյաններ դատարանի վճիռները չբողոքարկելու հետ կապված անհրաժեշտ է ստանալ համապատասխան պարզաբանում դատախազությունից՝ հետագա խնդիրներից խուսափելու նպատակով:

Ա. Ավանեսյանը նշեց, որ այժմ հիմնական խնդիրը ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունն է, որտեղ ոչ բավարար են հաշվարկված ռիսկի կոմպոնենտները, որի արդյունքում մեկ կազմակերպություն մշտապես հաշվարկվում է բարձր ռիսկայնության խմբում: Ռիսկայնությունը կոնստատ չափանիշների վրա չպետք է հիմնվի և պետք է լինի համապատասխան աղյուսակ, որի հիման վրա ռիսկայնության նվազում կապահովվի: Նշվածով պայմանավորված մեթոդաբանությունը պետք է ենթարկվի փոփոխության: Նաև առաջարկեց խստացնել վերահսկողությունը գործող իրավական ակտերի նկատմամբ: Միաժամանակ հարցրեց, թե թրաֆիքինգի հետ կապված քանի դեպք է հայտնաբերվել, քանի որ այժմ ՀՀ առողջապահության նախարարությունը իրականացնում է ծրագիր կապված թրաֆիքինգի զոհ դարձաց անձանց անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու ուղղությամբ, սակայն մինչ օրս որևէ անձ չի դիմել այդ հարցով: Այդ միջոցառումը ներառելով գործունեության տարեկան ծրագրում պետք է վերհանել, թե նշված ուղղությամբ ինչ է իրականացվել և ինչ է հայտնաբերվել, որի ադյունքում պարզ կդառնա այն ներառելու նպատակահարմարությունը: Ստուգաթերթերի փոփոխության հետ կապված պետք է գործընթացը որքան հնարավոր է արագացնել, իսկ դատական գործերի հետ կապված նշեց, որ պետք է աշխատողները ավելի խիստ պատասխանատվություն կրեն, որպեսզի հետագայում խնդիրները չկրկնվեն:

Ա. Դանիելյանը նշեց, որ ներկայացված ստուգումների տարեկան ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով գործող մեթոդաբանությունը, և հետագայում նրանում փոփոխություն կատարելու արդյունքում հնարավոր կլինի 2024 թվականի ծրագիրը համապատասխան փոփոխված մեթոդաբանության հիման վրա մշակելու համար:

Լ. Նանուշյանը նշեց, որ կարևոր է նաև հաշվի առնել քաղաքականությունը մշակող մարմնի առաջնահերթությունները, օրինակ՝ ծխախոտի սահմանափակումները կամ իմունիզացիայի գործընթացը: Միաժամանակ հարցրեց, թե արդյոք ստուգումների տարեկան ծրագրում ներառված են այնպիսի տնտեսավարողներ, որոնցում իրականացվելու է ծխախոտի սահմանափակումների պահանջների նկատմամբ ստուգումներ, հաշվի առնելով, որ գործող նորմերով տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված են ծխելը արգելող նշանների պարտադիր փակցված լինելու պահանջ, որը նպաստելու է նաև ոստիկանության կողմից համապատասխան միջոցառումների արդյունավետ կիրառմանը: Նաև հարցրեք, թե ադրյոք հնարավոր է ստուգումների ընթացքում ծխելու սահմանափակումների պահանջների խախտումներ տեսնելու դեպքում արձանագրել դրանք և տալ համապատասխան ընթացք:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ ստուգումների տարեկան ծրագրով նման տնտեսավարողներ նախատեսված չեն, սակայն նախատեսվում են վարույթներ: Ստուգումների ժամանակ ծխախոտի սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում հնարավոր չէ անդրադառնալ դրանց, սակայն զեկուցագրի հիման վրա հնարավոր է հարուցել համապատասխան վարույթ:

Ժ. Մայիլյանը հարցրեց, թե տեսուչների կատարելագործման հետ կապված ինչ ընթացակարգ է իրականացվում՝ վերապատրաստումներ կամ ատեստավորումներ, քանի որ նախկինում ներկայացված հաշվետվություններում առկա էին նաև աշխատողների հետ կապված խնդիրներ: Արդյոք չի իրականացվում մոնիթորինգ տեսուչների գիտելիքների կամ այլ հարցերի վերաբերյալ խնդիրը լուծելու նպատակով:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ այս տարում նախաձեռնվել է տեսուչների գիտելիքների ներքին ստուգում՝ թեստավորման ձևով, իսկ ընդհանուր առմամբ վերապատրաստումները և ատեստավորումները իրականացվում են քաղաքացիական ծառայության գրասենյակի միջոցով օրենքով սահմանված կարգով:

Ա. Դանիելյանը նշեց, որ նման խնդիրներ առկա են բոլոր տեսչական մարմիններում և այժմ դրանք հավաքագրվում են հետագայում լուծում ստանալու նպատակով մեթոդական ցուցումների և օրենսդրական նախաձեռնությունների ձևով:

Ա. Հարությունյանը նշեց, որ ՀՀ կառավարությունը նախաձեռնում է իրականացնել տեսուչների ատեստավորում և գնահատման արդյունքում ըստ կարողությունների կբարձրացվի տեսուչների աշխատավարձերը, քանի որ այժմ այն բավականին ցածր է, ինչպես նաև՝ եթե կիրառվեն նոր գործիքներ տեսուչների քանակը ավելի կնվազի:

Ա. Առուշանյանը նշեց, որ ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված եռամսյակային ստուգումները ԱԱՏՄ-ի տարածքային կենտրոնների համար բաշխված է հավասարաչափ, բայց երբ, որ տրոհում ենք տարածքային կենտրոնների վրա բավականին մեծ խզվածք է առաջանում: Օրինակ բերեց, որ ԱԱՏՄ հարավային տարածքային կենտրոնում դեղերի շրջանառության ոլորտում առաջին եռամսյակի համար ստուգումներ նախատեսված չեն և առաջարկեց կատարել համապատասխան բաշխվածություն:

Լ. Նանուշյանը առաջարկեց սահմանել համապատասխան ժամկետներ ԱԱՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունում փոփոխություն կատարելու գրոծընթացը իրականացնելու համար:

Ա. Հարությունյանը առաջարկեց վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 1-ը, որպեսզի հաջորդ տարի ստուգումների տարեկան մյուս տարվա ծրագիրը հաստատելու ընթացքում նման խնդիրը բացառվի:

Ա. Դանիելյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն (8 կողմ) քվեարկությամբ որոշվեց հաստատել ԱԱՏՄ 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը և ԱԱՏՄ 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

Թ. Հակոբյանը նշեց, որ որակի ապահովման վարչության տարեկան ծրագրի միջոցառումները ներկայացվել են ելնելով վարչությանը վերապահված լիազորություններից, նաև հիմք է ընդունվել 2022 թվականին ներքին հսկողության ընթացքում բացահայտված խնդիրները, ռիսկերը, բացթողումները և թերությունները: Ներկայացրեց ԱԱՏՄ-ում արձանագրած խնդիրները, մասնավորապես ստուգումների մեթոդաբանության, ստուգումների գործընթացի, հանձնարարականների հրապարակման և փաստացի ստուգում իրականացնելու, ուշ ստուգում և վերստուգում իրականացնելու, ծառայողական քննությունների իրականացման ընթացակարգի և դրանց արդյունքում կիրառվող կարգապահական պատասխանատվության անհամաչափ միջոցներ կիրառելու, գործուղումների տևողության և ստուգման ծավալի համարժեքության, վերստուգումների իրականացման, ինչպես նաև ներքին հսկողության բացակայության հետ կապված:

Ներկայացրեց ԱԱՏՄ աշխատողների ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տեսուչների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների կողմից արձագանքի ստացման և դատական գործերի խնդիրների վերաբերյալ:

Ա. Դանիելյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն (8 կողմ) քվեարկությամբ որոշվեց հաստատել Որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Որոշվեց.

1. Հաստատել ԱԱՏՄ 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:
2. Հաստատել ԱԱՏՄ 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:
3. Հաստատել ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:
4. Հավանություն տալ ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն և ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած չանաչելուն:
5. Ս. Սարգսյանին՝ ԱԱՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունում փոփոխություն կատարելու առաջարկները ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ:
6. Ա. Դանիելյանին՝ ամփոփել ԱԱՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունում փոփոխություն կատարելու առաջարկները և մշակված

նախագիծը օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառել՝ 2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ հաստատված լինելու նպատակով:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ